

Հայտին առնչվող հարցումների վերաբերյալ Պարզաբանում No.4

Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման ծրագիր

**Երևանի ՋԷԿ-ի 220/110/35 կՎ ենթակայանի վերակառուցման համար կայանի նախագծման, մատակարարման և տեղակայման ձեռքբերում
(ICB No. ETNIP_YTPC_ICB_1/2015)**

7-ր նոյեմբերի, 2015թ.

| No. | Հարցումներ հայտատուների կողմից | Պարզաբանում Գործատուի կողմից |
|-----|---|--|
| 1. | <p>Բաժին I, ՑՀ, Բ. Հայտերի նախապատրաստում</p> <p>Հաշվի առնելով նախապատրաստվող և տպվելիք փաստաթղթերի քանակը, ինչպես նաև այլ մրցույթներում մեր ունեցած փորձը՝ մենք խնդրում ենք ձեզ հաստատել, որ որոշ պահանջվող փաստաթղթեր, ինչպես օրինակ՝ տեստերի տպագիր հաշվետվությունները, սարքավորումների ձեռնարկները և հղումների ցանկը կարող են ներկայացվել միայն էլեկտրոնային տարբերակով, իսկ առաջարկի տպագիր օրինակի մեջ պետք է լինի փաստաթղթերի ցանկը և դրանց հղումները էլեկտրոնային ձևով:</p> | <p>Ցավոք սրտի, դա անընդունելի է: Բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացվեն տպագիր օրինակներով:</p> |
| 2. | <p>Բաժին IV. Հայտերի ձևեր, Աղյուսակ No. 1. Արտասահմանից մատակարարված կառույցը, սարքավորումները և պարտադիր պահեստամասերը, 1.3 Պարտադիր պահեստամասերը, 1.3.13.1 Յուրաքանչյուր տիպի ռելե (լրակազմ)</p> <p>Խնդրում ենք պարզաբանել, թե ինչ պետք է դիտարկել 2 պահանջվող լրակազմերի վերաբերյալ՝</p> <ol style="list-style-type: none"> 1) Յուրաքանչյուր տիպի ռելե, ինչը ծավալներում դիտարկվում է, պետք է մատակարարվի երկու անգամ ավելի՝ որպես պահեստամասեր կամ 2) Հայտատուն կարող է որոշել պահեստային ռելեների լրակազմ իր հայեցողությամբ, որը մատակարարվում է երկու անգամ կամ 3) Հայտատուն որոշում է ռելեների երկու տեսակ բոլոր ռելեների միջից, որոնք դիտարկվել են ծավալներում, և նշել դրանք որպես պահեստամասեր: | <p>Յուրաքանչյուր տիպի ռելեի համար Հայտատուն պետք է մատակարարման ծավալներում ներառի ռելեների 2 լրացուցիչ լրակազմ (որպես պարտադիր պահեստամասեր):</p> |
| 3. | <p>Բաժին IV. Հայտերի ձևեր, Աղյուսակ No. 1. Արտասահմանից մատակարարված կառույցը, սարքավորումները և պարտադիր պահեստամասերը, 1.3 Պարտադիր պահեստամասերը, կետեր</p> | <p>Խնդրում ենք հետևել գնային աղյուսակների պահանջներին: Քանակները հստակորեն նշված են:</p> |

| No. | Հարցումներ հայտատուների կողմից | Պարզաբանում Գործատուի կողմից |
|-----|--|---|
| | <p>1.3.11.1, 1.3.11.2, 1.3.12.1, 1.3.12.2, 1.3.13.2, 1.3.13.3</p> <p>Խնդրում ենք սահմանել պահանջվող պահեստամասերի քանակը և խորհուրդ տալ պարզաբանման համար վերը նշված պահանջի պես, թե ինչպես որոշել սարքերը մեկ պահեստային լրակազմում, այսինքն՝ դիտարկվելիք յուրաքանչյուր տեսակի հիշողության կառավարման բլոկ (MCB), ապահովիչ, օժանդակ ռելե, լամպ, կամ Հայտատուն կարող է որոշել լրակազմը իր հայեցողությամբ:</p> | |
| 4. | <p>Բաժին VI. Գործատուի պահանջները, 1.2.4.7.1.1 Հեռահաղորդակցություն</p> <p>28.10.2015թ.-ին կայացած նախամրցութային հանդիպման արձանագրություն, կետեր No. 10 և 14</p> <p>Հայտերի վերաբերյալ հարցումների Պարզաբանում No.2՝ ուղարկված 02.11.2015թ.-ին, Կետ No. 44</p> <p>Նախամրցութային հանդիպման արձանագրության կետ 14 և Պարզաբանում No.2-ի կետ No. 44՝</p> <p>Գործատուի կողմից պարզաբանման մեջ նշված է, որ Հայտատուն պետք է այս մրցույթի շրջանակներում գնանշի նաև օպտիկա-մանրաթելային հողանցումային լարերի (ՕՄՀԼ) տեղակայումը օդային էլեկտրահաղորդման գծերի վրա, իսկ դրանց համապատասխան հեռավորությունները տրամադրված են, այն է՝</p> <ul style="list-style-type: none"> - ուր 110 կՎ օդային էլեկտրահաղորդման գծեր, ընդհանուր երկարությունը՝ մոտավորապես 75 կմ, - չորս 220 կՎ օդային էլեկտրահաղորդման գծեր, ընդհանուր երկարությունը՝ մոտավորապես 136 կմ <p>Այս պարզաբանումը հակասության մեջ է այն ծավալի հետ, որը սահմանված է Բաժին VI-ի (Գործատուի պահանջներ) 1.2.4.7.1.2 կետում («Պայմանագրի շրջանակներում հեռահաղորդակցությանն առնչվող ծառայություն»), որում նշված է. «Ընթացիկ Պայմանագիրը ներառում է նախագծի ուսումնասիրությունները, մատակարարումները, իրականացումը և մալուխների անցկացումը <u>ենթակայանում</u> և ցանցի <u>տարբեր ենթակայաններում</u>, ինչպես նկարագրված է ստորև....»:</p> <p>Խնդրում ենք հաստատել, որ հեռահաղորդակցությունը և հեռապաշտպանությունը <u>միայն ենթակայանների ներսում</u></p> | <p>Տեղեկացնում ենք ձեզ, որ նախամրցութային հանդիպումից հետո մենք ևս մի անգամ ստուգել ենք այս հարցը ԷԷՀՕ ՓԲԸ հետ: Հայտատուները չպետք է իրենց ծավալում ներառեն ՕՄՀԼ-ների մատակարարումը և տեղակայումը բոլոր ՕԳ-ների վրա: ՕՄՀԼ-ներն արդեն տեղակայված են ՕԳ-ների վրա:</p> <p>Կապալառուի ծավալը ներառում է նոր ՕՄՀԼ-ի տեղակայում Երևանի ՋԷԿ-ի 220/110/35 կՎ ենթակայանում և դրանց միացումը ՕՄՀԼ-ին, որն արդեն տեղակայված է ՕԳ-ների վրա:</p> |

| No. | Հարցումներ հայտատուների կողմից | Պարզաբանում Գործատուի կողմից |
|-----|---|--|
| | աշխատանքների, սարքավորումների և ծառայությունների համար է և ոչ թե ենթակայաններից դուրս վերը նշվածի և օդային գծերի համար: | |
| 5. | <p>Բաժին VI. Գործատուի պահանջներ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՂՅՈՒՄԱԿ – Հիմնական տվյալներ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՂՅՈՒՄԱԿ – Տվյալներ տեղեկատվության համար Ավտոտրանսֆորմատոր 220/110 կՎ 200 ՄՎԱ</p> <p>1. Խնդրում ենք հաստատել, որ մենք կարող ենք դիտարկել միացումների խումբ՝ YNa0d (կետ 6), քանի որ մենք ունենք ավտոտրանսֆորմատոր:</p> <p>2. Խնդրում ենք հաստատել, որ լարման գործակիցը 220/110 կՎ է, և չկա երրորդ փաթույթ:</p> <p>3. Կետը 9-ը առնչվում է երրորդային փաթույթին: Խնդրում ենք հաստատել, որ չկա երրորդային փաթույթ կամ եթե այն առկա է, տրամադրել լրացուցիչ տեղեկություն:</p> <p>4. Խնդրում ենք սահմանել մեկուսացման մակարդակները (BIL/AC=? kV) բարձր լարման չեզոք ելուստի համար, այսինքն՝ լրիվ կամ թեթևացված մեկուսացում:</p> <p>5. Գնային աղյուսակներում նշված է մոնիտորինգի համակարգը: Խնդրում ենք տրամադրել տեխնիկական պարամետրերը:</p> <p>6. Տեխնիկական բնութագրերում (Կետ 11) յուղի կոնսերվատորի համար գրված է. «Վակուումային ֆիլտր չորացնող ռեգեներացված հիգրոսկոպիկ աղերի միջոցով»: Արդյո՞ք սա վերաբերում է տեխսպասարկում չպահանջող շնչողական փականին կամ այլ սարքավորման: Խնդրում ենք պարզաբանել:</p> | <p>1. Տե՛ս մրցութային փաստաթղթերի 6-րդ կետը, էջ 293:</p> <p>2. Տե՛ս մրցութային փաստաթղթերի 7-րդ կետը, էջ 293:</p> <p>3. Արտաքին սպառողների համար երրորդային փաթույթ նախատեսված չէ: Լարման կարգավորման և լարման ավելացման համար երրորդային փաթույթի նախատեսման հարցը պետք է որոշվի արտադրողների կողմից:</p> <p>4. Մեկուսացման մակարդակները պետք է համապատասխանեն IEC ստանդարտներին: Տե՛ս մրցութային փաստաթղթերի 5-րդ կետը, էջ 293:</p> <p>5. Մոնիտորինգի համակարգը պետք է համապատասխանի արտադրողների ստանդարտներին:</p> <p>6. Ֆիլտրի այս տեսակը պարտադիր է: Դրա առնչությունը որևէ տեսակի սարքավորմանը պետք է լինի արտադրողի ստանդարտներին համապատասխան:</p> |
| 6. | <p>Բաժին VI. Գործատուի պահանջներ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՂՅՈՒՄԱԿ – Հիմնական տվյալներ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՂՅՈՒՄԱԿ – Տվյալներ տեղեկատվության համար Ուժային տրանսֆորմատոր 110/35/6 կՎ 27,5 ՄՎԱ</p> <p>1. Խնդրում ենք սահմանել նոմինալ հզորությունը միջին լարման (ՄԼ) և ցածր լարման (ՑԼ) փաթույթների համար ONAN /ONAF1 /ONAF2 պայմաններում:</p> <p>2. Խնդրում ենք սահմանել կարճ միացման դիմադրությունը (Կետ 9) ԲԼ-ՑԼ-ի և ՄԼ-ՑԼ-ի համար, ինչպես նաև այն նոմինալ հզորությունը, որին դրանք վերաբերում են:</p> <p>3. Խնդրում ենք սահմանել մեկուսացման մակարդակները (BIL/AC=?</p> | <p>1. Տե՛ս մրցութային փաստաթղթերի 3-րդ կետը, էջ 308:</p> <p>2. Տե՛ս մրցութային փաստաթղթերի 9-րդ կետը, էջ 309</p> <p>3. Մեկուսացման մակարդակները պետք է լինեն՝ ըստ IEC ստանդարտի: Տե՛ս մրցութային փաստաթղթերի 5-րդ կետը, էջ 308</p> <p>4. Մոնիտորինգի համակարգը պետք է համապատասխանի արտադրողների ստանդարտներին:</p> <p>5. Այս տեսակի ֆիլտրը պարտադիր է: Դրա առնչությունը որևէ տեսակի սարքավորման հետ պետք է լինի արտադրողների ստանդարտներին համապատասխան:</p> |

| No. | Հարցումներ հայտատուների կողմից | Պարզաբանում Գործատուի կողմից |
|-----|---|---|
| | <p>kV) ԲԼ (բարձր լարման) չեզոք էլուստի համար, այսինքն՝ լրիվ կամ թեթևացված մեկուսացում:</p> <p>4. Գնային աղյուսակներում նշված է մոնիտորինգի համակարգը: Խնդրում ենք տրամադրել տեխնիկական պարամետրերը:</p> <p>5. Յուղի կոնսերվատորի համար տեխնիկական բնութագրերում (Կետ 11) գրված է. «Վակուումային ֆիլտր չորացնող ռեգեներացված հիգրոսկոպիկ աղերի միջոցով»: Արդյո՞ք սա վերաբերում է տեխսպասարկում չպահանջող շնչողական փականին կամ այլ սարքավորմա՞ն: Խնդրում ենք պարզաբանել:</p> | |
| 7. | <p>ՕՄՀԼ / ՕԳ (օդային գիծ)</p> <p>Խնդրում ենք հաստատել, որ ՕՄՀԼ և ոչ միայն օպտիկա-մանրաթելային մալուխներ պետք է տեղակայվեն ՕԳ-ների վրա:</p> | ՕՄՀԼ-ները արդեն տեղակայված են բոլոր ՕԳ-ների վրա: |
| 8. | <p>ՕՄՀԼ / ՕԳ</p> <p>Խնդրում ենք խորհուրդ տալ, թե ով պետք է տրամադրի, մատակարարի (Գործատու, համակարգի օպերատոր, գլխավոր կապալառու) ՕՄՀԼ 76,6 կմ երկարությամբ լարը 110 կՎ ՕԳ-ների համար և 135,8 կմ երկարությամբ լարը 220 կՎ ՕԳ-ների համար, ներառյալ տեղակայման համար ուղեկցող նյութերը:</p> | <p>Հայտատուները չպետք է իրենց ծավալում ներառեն ՕՄՀԼ-ների մատակարարումը և տեղակայումը բոլոր ՕԳ-ների վրա: ՕՄՀԼ-ները արդեն տեղակայված են ՕԳ-ների վրա:</p> <p>Կապալառուի ծավալը ներառում է նոր ՕՄՀԼ-ի մատակարարումը և տեղակայումը Երևանի ՋԷԿ-ի 220/110/35 կՎ ենթակայանում և դրանց միացումը ՕՄՀԼ-ին, որն արդեն տեղակայված է ՕԳ-ների վրա:</p> |
| 9. | <p>ՕՄՀԼ / ՕԳ</p> <p>Խնդրում ենք հաստատել, որ նախամրցութային հանդիպման ձեր արձանագրության մեջ նշված ՕՄՀԼ լարերի երկարությունը միաշղթա կամ երկշղթա է:</p> | Տե՛ս պատասխան No. 8 |
| 10. | <p>ՕՄՀԼ / ՕԳ</p> <p>Խնդրում ենք խորհուրդ տալ, թե գնային աղյուսակի որ տողում մենք պետք է ներառենք ՕՄՀԼ-ի տեղակայման ծախսերը, ինչպես նաև ՕՄՀԼ-ի նյութերի համար ծախսերը:</p> | Տե՛ս պատասխան No. 8 |
| 11. | <p>Գնային աղյուսակ, տող 1.3.15. ՕՄՀԼ / ՕԳ</p> <p>Գնային աղյուսակ, կետ 1.3.15:</p> <p>«Առկա գծային երկշղթա հենասյուների տեղափոխում և մուտքային գծերի միացում (գծերի կարճեցում մինչև 80 մ) 7 հատ ԸՆԴԱՄԵՆԸ (Աղյուսակ No. 5. Ընդհանուր ամփոփում)»</p> <p>Խնդրում ենք հաստատել, որ տեղափոխումից հետո առկա գծային հենասյուները պետք է օգտագործվեն:</p> | Մենք հաստատում ենք, որ տեղափոխումից և նորոգումից հետո առկա գծային հենասյուները պետք է օգտագործվեն: |
| 12. | <p>Գնային աղյուսակ, տող 1.3.15. ՕՄՀԼ / ՕԳ</p> <p>Գնային աղյուսակ, կետ 1.3.15:</p> | Մենք հաստատում ենք, որ տեղափոխումից և նորոգումից հետո առկա գծային հենասյուները պետք է մոնտաժվեն նոր հիմքերի վրա: |

| No. | Հարցումներ հայտատուների կողմից | Պարզաբանում Գործատուի կողմից |
|-----|--|---|
| | <p>«Առկա գծային երկշղթա հենասյուների տեղափոխում և մուտքային գծերի միացում (գծերի կարճեցում մինչև 80 մ) 7 հատ ԸՆԴԱՄԵՆԸ (Աղյուսակ No. 5. Ընդհանուր ամփոփում)»</p> <p>Խնդրում ենք հաստատել, որ տեղափոխումից հետո առկա գծային հենասյուները պետք է մոնտաժվեն նոր հիմքերի վրա:</p> | |
| 13. | <p>Գնային աղյուսակ, կետ 1.3.7-ի ծավալ ՄԼ-մալուխ</p> <p>Գնային աղյուսակի կետ 1.3.7՝</p> <p>«Նոր մալուխային խրամուղիների կառուցում (մալուխների փոփոխմամբ) (1600 մ)»:</p> <p>Խնդրում ենք հաստատել, որ մալուխային խրամուղիների երկարությունը ներառում է թե՛ կառավարման մալուխների, թե՛ 35 կՎ և 6 կՎ ուժային մալուխների նոր խրամուղիները:</p> | <p>Այո, մենք հաստատում ենք, որ ներառված են թե կառավարման մալուխները և թե 35 կՎ և 6 կՎ ուժային մալուխները:</p> |
| 14. | <p>"Armenia YTPC Substation_final_corrected_upd.pdf"</p> <p>Էջ 420/691 գլուխ 4.1</p> <p>Ըստ 4.1 կետի (էջ 420/691)՝ նշված է, որ ՄԼ մալուխները պետք է լինեն XLPE տեսակի: Ըստ գնային աղյուսակի 1.1.8.1 և 1.1.8.2 կետերի՝ 35 կՎ լարման և 6 կՎ լարման մալուխները նշված են որպես ալյումինե: Խնդրում ենք խորհուրդ տալ, թե ինչ տեսակի մալուխներ մենք պետք է տրամադրենք այս ծրագրի շրջանակներում:</p> | <p>Խնդրում ենք հետևել գնային աղյուսակի պահանջներին, այսինքն՝ 35 կՎ լարման և 6 կՎ լարման մալուխները պետք է լինեն ալյումինե:</p> |
| 15. | <p>Պարզաբանում 2, կետ 15, 220 կՎ լարման գծի պաշտպանություններ</p> <p>Ըստ աշխատանքների ծավալի և պարզաբանման՝ հակառակ ծայրի բոլոր ենթակայաններում Siemens-ի կողմից արտադրված 7SA522 ռելե է տեղադրված: Լինելով դիստանցիոն պաշտպանություն՝ պետք չէ նույն արտադրության ռելեն տեղակայել Երևանի ՋԷԿ-ի հակառակ ծայրի ենթակայանում:</p> <p>Հայտատուն կարող է առաջարկել տարբեր տեսակի ռելեներ՝ հետևելով տեխնիկական բնութագրերին:</p> <p>Խնդրում ենք հաստատել:</p> | <p>Մենք չենք պնդում, որ նոր սարքավորումները պետք է արտադրվեն Siemens-ի կողմից: Միակ պահանջն այն է, որ մատակարարվող սարքավորումը պետք է ունենա միննույն պարամետրերը և համատեղելիությունը առկա 7SA522 սարքավորման հետ:</p> |
| 16. | <p>Պարզաբանում 2, կետ 20, 110 կՎ լարման և 35 կՎ լարման ենթակայանների համար ազատ տարածք</p> <p>Ըստ պարզաբանման հետ տրամադրված հողատարածքների տեղաբաշխման քարտեզի գծագրի՝ նշված տարածքը 200մ x 70մ է: Այնուամենայնիվ, առաջարկվող նոր 110կՎ լարման և 35 կՎ լարման ենթակայանների հատակագծի պահանջվող նվազագույն տարածքը մոտավորապես 290մ x 100մ է: Հաշվի առնելով վերոնշյալը՝ խնդրում ենք պարզաբանել հետևյալը՝</p> | <ol style="list-style-type: none"> 1. Կարմիր գույնով նշված տարածքը 110 կՎ լարման ենթակայանն է: Ինչ վերաբերում է 35 կՎ լարման ենթակայանին, ապա Կապալառուն նախագծման փուլում կարող է ընտրել երկու տարբերակ՝ <ol style="list-style-type: none"> a) Վերականգնել այն առկա 35 կՎ լարման ենթակայանի տարածքում, b) Կամ տեղաշարժել առկա տարածքը դեպի ազատ տարածք: |

| No. | Հարցումներ հայտատուների կողմից | Պարզաբանում Գործատուի կողմից |
|-----|---|---|
| | <p>1. Արդյո՞ք 200մ x 70մ ազատ տարածքի ներքո հողատարածքների տեղաբաշխման քարտեզի գծագիրը միայն 110 կՎ լարման ենթակայանի համար է, թե՞ նաև 110 կՎ և 35 կՎ լարման շենքի և ելքային սնուցիչների առման պորտալների համար:</p> <p>2. Եթե ազատ տարածքը միայն 110 կՎ լարման ենթակայանի համար է, ապա ո՞րը պետք է լինի 35 կՎ լարման շենքի տեղանքը:</p> <p>Խնդրում ենք նշել 35 կՎ լարման շենքի տեղանքը: Բացի այդ, արդյո՞ք 35 կՎ լարման ենթակայանի առման նմանատիպ տեղանքները կմնան նույնը, ինչ որ առկա ենթակայանինը:</p> <p>Խնդրում ենք պարզաբանել վերոնշյալ կետերը:</p> | |
| 17. | <p>Պարզաբանում 2, կետ 35 և 47, Առկա 110 կՎ լարման սարքավորման ապամոնտաժում</p> <p>Ըստ Պարզաբանում 35-ի՝ նշվում է, որ 110 կՎ լարման սարքավորումը ապամոնտաժման ենթակա չէ:</p> <p>Մինչդեռ Պարզաբանում no. 47-ում նշվում է, որ Հայտատուն պետք է հաշվի առնի 110 կՎ լարման և 35 կՎ լարման ենթակայանների ապամոնտաժման ծախսերը և ներկայացնի համապատասխան և ողջամիտ առաջարկներ:</p> <p>Այս երկու պարզաբանումները հակասական են: Խնդրում ենք պարզաբանել 110 կՎ լարման և 35 կՎ լարման ենթակայանների ապամոնտաժման հստակ ծավալը, ինչպես նաև համապատասխանաբար վերանայել գնային աղյուսակները:</p> | <p>Ինչպես պաշտոնապես նշվել է նախամրցութային հանդիպման ընթացքում, 110 կՎ լարման ենթակայանը ապամոնտաժման ենթակա չէ: Ինչ վերաբերում է 35 կՎ լարման ենթակայանին, տե՛ս վերը նշված պատասխան No. 16-ը:</p> <p>Շնորհակալություն առաջարկի համար, սակայն գնային աղյուսակները վերանայելու կարիք չկա:</p> |
| 18. | <p>Պարզաբանում 2, կետ 44, Նախամրցութային հանդիպման արձանագրություն, կետ 10, ենթակայանների միջև բարձրավոլտ գծերի վրա ՕՄՀԼ</p> <p>Ըստ պարզաբանումների՝ ՕՄՀԼ-ի մատակարարումը և տեղակայումը Երևանի ՋԷԿ-ի ենթակայանի և հակառակ ծայրի բոլոր ենթակայանների միջև ներառված են աշխատանքների ծավալում: Ըստ նախամրցութային հանդիպման արձանագրության՝ ՕՄՀԼ-ի տեղակայումը ութ 110 կՎ լարման գծերի և չորս 220 կՎ լարման գծերի վրա ներառված է աշխատանքների ծավալում: Ըստ ավելի վաղ բարձրացված հարցման՝ ՕՄՀԼ-ի մատակարարումը/տեղակայումը ենթակայանների միջև ընդհանուր առմամբ ներառված է հաղորդման գծի ծրագրում/պայմանագրում: Այնուամենայնիվ, եթե դեռևս պնդում եք, որ այն պետք է ներառվի այս ծրագրում, ապա խնդրում ենք տրամադրել հետևյալ</p> | <p>Տե՛ս պատասխան No. 8:</p> |

| No. | Հարցումներ հայտատուների կողմից | Պարզաբանում Գործատուի կողմից |
|-----|--|---|
| | <p>մանրամասները բոլոր գծերի համար՝</p> <p>1. Բոլոր 220 կՎ և 110 կՎ լարման գծերի ուղեգծումը, որոնց վրա պետք է տեղադրվի ՕՄՀԼ:</p> <p>2. Մենք հասկանում ենք, որ ՕՄՀԼ-ն պետք է տեղակայվի առկա գծերի վրա, որոնք գործում են: Բացի այդ, անհրաժեշտ է, որ Հայտատուն ապամոնտաժի առկա հողանցման մալուխը նոր ՕՄՀԼ տեղակայելու համար:</p> <p>Խնդրում ենք հաստատել:</p> <p>3. Խնդրում ենք հաստատել, որ առկա հենասյուները կարող են ՕՄՀԼ-ի բեռ կրել: Հենասյուների որևէ ձևափոխում/վերանորոգում չի պահանջվում:</p> <p>4. ՕՀՄԼ-ի տեխնիկական բնութագրերը և օժանդակ սարքեր:</p> <p>Բոլոր վերոնշյալ մանրամասները անհրաժեշտ են՝ գնահատելու ՕՄՀԼ-ի տեղակայումների համար ներառված աշխատանքները:</p> | |
| 19. | <p>Պարզաբանում 2, կետ 49, Տեսահսկում</p> <p>Խնդրում ենք պարզաբանել, թե որ տարածքի համար է պահանջվում տեսահսկում: Արդյո՞ք այն պահանջվում է միայն կառավարման շենքի, մուտքային տարածքների համար, թե՛ նաև արտաքին ենթակայանի տարածքի համար:</p> <p>Եթե տեսահսկում պահանջվում է նաև արտաքին տարածքի համար, ապա այն կարևոր տարածքները (օրինակ՝ տրանսֆորմատորներ/գլխավոր մուտք և այլն), որոնց համար պահանջվում է տեսահսկում, պետք է հստակ կերպով սահմանվեն՝ ըստ Երևանի ՋԷԿ-ի պահանջների:</p> <p>Հայտատուն չի կարող որոշել այն տարածքները, որոնց համար պահանջվում է տեսահսկում:</p> | <p>Եվս մեկ անգամ տե՛ս Պարզաբանում 2, կետ 49, Տեսահսկում Ցավոք, Հայտատուները չեն կարող սահմանել և որոշել համապատասխան տարածքները:</p> |
| 20. | <p>Պարզաբանում 2, կետ 52, 2 հատ 110 կՎ լարման բջիջ</p> <p>Առկա 110 կՎ լարման ենթակայանում գոյություն ունի ընդամենը 21 բջիջ: Գնային աղյուսակում նշված է միայն 19 բջիջ 19 լրակազմ անջատիչների հետ միասին: Ըստ պարզաբանումների՝ երկու այլ անջատիչների գինը նույնպես պետք է հաշվի առնել, այնուհետև գնային աղյուսակում սարքավորումների քանակը պետք է լինի 21 բջիջ 21 լրակազմ անջատիչների, ինչպես նաև համապատասխան սարքավորումների հետ միասին, օրինակ՝ բաժանիչ, հոսանքի տրանսֆորմատոր, ունակային լարման տրանսֆորմատոր և այլն:</p> <p>Բացի այդ, հաստատել, որ լուսերի քանակները (օրինակ՝</p> | <p>Մեկ անգամ ևս տե՛ս Պարզաբանում 2, կետ 52</p> <p>Գործատուն չի կարող ենթադրել, թե որ արտադրողի սարքավորումները կառաջարկվեն Հայտատուների կողմից:</p> |

| No. | Հարցումներ հայտատուների կողմից | Պարզաբանում Գործատուի կողմից |
|-----|---|---|
| | հաղորդակար, սեղմակներ, մալուխներ և այլն) պետք է լինեն 21 բջիջ 19-ի փոխարեն: Խնդրում ենք դիտարկել և պարզաբանել: | |
| 21. | <p>Պարզաբանում 2, կետ 56, Պարզաբանման խնդրանք, կետ 6, 35 կՎ և 6 կՎ լարման մալուխներ դեպի առկա սարքավորումներ</p> <p>Պարզաբանումներում տրված են մալուխների երկարությունները: Այնուամենայնիվ, խնդրում ենք մեզ տրամադրել նաև այդ մալուխների չափսերը: Այնուհետև, ըստ Պարզաբանում no. 6-ի, (ըստ պարզաբանման խնդրանքի) նշված են միայն «Քիմոեակտիվ-1», «Քիմոեակտիվ-2» և «ԵրՀԾԳՑԷ1»-ի համար հզորության դրվածքները: Խնդրում ենք տրամադրել նաև այս սնուցիչների երկարությունները և մալուխների չափսերը:</p> | Տե՛ս Պարզաբանում No. 2, «Նախամրցութային հանդիպման համար պարզաբանումների խնդրանք», կետ 6: |
| 22. | <p>Պարզաբանման խնդրանք, կետ 7, Հողանցման հաշվարկներ</p> <p>Պարզաբանում 1-ի հետ տրամադրված գրունտի ուսումնասիրության հաշվետվության մեջ գրունտի տեսակարար դիմադրության չափումը ազատ տարածքում և առկա 220 կՎ լարման տարածքում տրամադրված չէ:</p> <p>Խնդրում ենք Ձեզ տրամադրել այն:</p> | Խնդրում ենք հետևել Խորհրդատուի կողմից տրամադրված ինժեներա-երկրաբանական հետազոտության հաշվետվությանը: Գրունտի ավելի մանրամասն ուսումնասիրությունը պետք է իրականացվի Կապալառուի կողմից և այդպիսի ուսումնասիրության արդյունքները պետք է օգտագործվեն նախագծման և շինարարության մեջ: |
| 23. | <p>Պարզաբանման խնդրանք, կետ 8, 9S և 10S տրանսֆորմատորների առկա պորտալների վերականգնում:</p> <p>Խնդրում ենք որոշել վերականգնման ենթակա պորտալները մրցութային փաստաթղթերում տրամադրված գլխավոր հատակագծում: Մրցութային գծագրերում 9S և 10S տրանսֆորմատորները հստակ չեն: Խնդրում ենք սա պարզաբանել:</p> | <p>Ձեր հարցի պատասխանը հստակ կերպով նշված է մրցութային փաստաթղթերում Խորհրդատուի կողմից տրամադրված գծագրերում:</p> <p>Խնդրում ենք դիտարկել ևս մեկ անգամ:</p> |
| 24. | <p>Նախամրցութային հանդիպման արձանագրության կետ 15 (b)-ի պատասխանը, ԷԷՀՕ-ի նամակ no. 01-ՄՄ-12/626, Պաշտպանության և հեռահաղորդակցության համակարգ</p> <p>Հղվող պարզաբանումից մենք հասկանում ենք հետևյալը`</p> <ol style="list-style-type: none"> 220/110/35կՎ լարման ենթակայանի համար ամբողջովին նոր պաշտպանության համակարգը պետք է մատակարարվի ենթակայանի ավտոմատ համակարգի (SCADA/DCS) հետ միասին: 220 կՎ և 110 կՎ լարման գծերի համար պետք է տրամադրվի օպտիկա-մանրաթելային հեռահաղորդակցության համակարգ: <p>Գծային/ալիքային սահմանափակիչով որևէ հաղորդակցության համակարգ նախատեսված չէ ոչ 220 կՎ և ոչ 110 կՎ լարման</p> | <ol style="list-style-type: none"> Արդյո՞ք դուք լրջորեն կարծում եք, որ 1960-ական թթ. արտադրված առկա պաշտպանության համակարգը կարող է օգտագործվել նոր ենթակայանի համար: Տե՛ս պատասխան No. 8: |

| No. | Հարցումներ հայտատուների կողմից | Պարզաբանում Գործատուի կողմից |
|-----|---|--|
| | <p>գծերի սնուցիչների համար: Խնդրում ենք հաստատել, թե արդյոք ճիշտ ենք ընկալել:</p> | |
| 25. | <p>Նախամրցութային հանդիպման արձանագրության կետ 15 (b) –ի պատասխան, ԷԷՀՕ-ի նամակ no. 01-ՄՄ-12/626, Պաշտպանության համակարգ</p> <p>Հղման ներքո պարզաբանումը նշում է, որ՝ «Երևան ՋԷԿ-ի 110 կՎ լարման գծերի ԴՖՊ-ները (դիֆերենցիալ-ֆազային պաշտպանություն) անսարք են և չեն շահագործվում: 110 կՎ լարման գծերի ԳԴՊ-ները (գծերի դիֆերենցիալ պաշտպանություն) և ԷՊՁ-1636-ի (պաշտպանության էլեկտրական պանել) լրակազմերը կփոխարինվեն նոր միկրոպրոցեսորային սարքավորումներով»:</p> <p>1. Խնդրում ենք հաստատել, թե արդյոք գծային դիֆերենցիալ պաշտպանությունը պետք է տրամադրվի բոլոր 110 կՎ լարման գծերի բջիջների համար, թե միայն ընտրված գծերի բջիջների համար: Բացի այդ, խնդրում ենք նաև հաստատել Main-1-ի և Main-2-ի պաշտպանությունները 110 կՎ լարման գծի բջիջների (դիֆերենցիալ/դիստանցիոն) համար:</p> <p>2. Եթե դիֆերենցիալ պաշտպանությունները պետք է դիտարկվեն, ապա խնդրում ենք հաստատել դիֆերենցիալ պաշտպանության ռելեների ծավալը հակառակ ծայրի այլ ենթակայաններում:</p> <p>3. Եթե պահանջվող հայտատուն միայն մատակարարի հակառակ ծայրի այլ ենթակայանի համար դիֆերենցիալ պաշտպանության ռելե, ապա դրա տեղակայումը / տեստավորումը / գործարկումը / ինտեգրացումը առկա համակարգի մեջ պետք է նշված լինի Երևանի ՋԷԿ-ի աշխատանքների ծավալում:</p> <p>Խնդրում ենք դիտարկել վերոնշյալ կետերը և պարզաբանել:</p> | <p>1. Տե՛ս մրցութային փաստաթղթերի «Դիֆերենցիալ պաշտպանության տերմինալ»-ը, էջ 567:</p> <p>2. Տե՛ս նախամրցութային հանդիպման արձանագրության պատասխան 3-ը:</p> <p>3. Տե՛ս վերոնշյալ պատասխանը:</p> |
| 26. | <p>Նախամրցութային հանդիպման արձանագրության կետ 15 (b) –ի պատասխան, ԷԷՀՕ-ի նամակ no. 01-ՄՄ-12/626, Պաշտպանության համակարգ</p> <p>1. Խնդրում ենք հաստատել, թե արդյոք պահանջվում է գծային դիֆերենցիալ պաշտպանություն 220 կՎ լարման բոլոր գծերի բջիջների համար: Խնդրում ենք հաստատել նաև Main-1-ի և Main-2-ի պաշտպանությունները 110 կՎ լարման գծի բջիջների համար (դիֆերենցիալ/դիստանցիոն):</p> | <p>1. Տե՛ս մրցութային փաստաթղթերի 565-րդ էջը:</p> <p>2. Տե՛ս նախամրցութային հանդիպման արձանագրության պատասխան 3-ը:</p> <p>3. Տե՛ս վերոնշյալ պատասխանը:</p> |

| No. | Հարցումներ հայտատուների կողմից | Պարզաբանում Գործատուի կողմից |
|-----|---|---|
| | <p>2. Եթե դիֆերենցիալ պաշտպանությունները պետք է դիտարկվեն, ապա խնդրում ենք հաստատել հակառակ ծայրի այլ ենթակայաններում գտնվող դիֆերենցիալ պաշտպանության ռելենների ծավալը:</p> <p>3. Եթե պահանջվող հայտատուն կմատակարարի միայն հակառակ ծայրի այլ ենթակայանի համար դիֆերենցիալ պաշտպանության ռելեն, ապա դրա տեղակայումը / տեստավորումը / շահագործումը / ինտեգրացումը առկա համակարգի մեջ պետք է նշված լինի Երևանի ՋԷԿ-ի աշխատանքների ծավալում:</p> <p>Խնդրում ենք դիտարկել վերոնշյալ կետերը և պարզաբանել:</p> | |
| 27. | <p>Նախամրցութային հանդիպման արձանագրություն, Կոնտուրային քարտեզներ</p> <p>Նախամրցութային հանդիպման ժամանակ նշվեց, որ Երևանի ՋԷԿ-ը կտրամադրի կոնտուրային քարտեզներ ազատ տարածքի համար: Այնուամենայնիվ, տրամադրվել են միայն հողատարածքների տեղաբաշխման քարտեզների չափսեր իրենց կոորդինատներով՝ համաձայն Պարզաբանում 2-ի:</p> <p>Խնդրում ենք տրամադրել նաև կոնտուրային քարտեզ/հատակագիծ առաջարկվող տարածքում հարթեցման աշխատանքները պատշաճ կերպով ընկալելու համար:</p> | <p>Խնդրում ենք հետևել Պարզաբանում No. 2-ի հետ միասին տրամադրված գլխավոր հատակագծում նշված պարամետրերին:</p> |
| 28. | <p>Պարզաբանում 2, Ազատ տարածքի հատակագիծ, Հաղորդման գծերի վերակոդմնորոշում</p> <p>Ըստ Պարզաբանում 2-ում նշված հատակագծային գծագրերի՝ առկա 110 կՎ լարման հաղորդման գծերը անցնում են ամբողջ ազատ տարածքով: Խնդրում ենք պարզաբանել այս գծերի վերակոդմնորոշման ծավալը շինարարական աշխատանքների ժամանակ: Մենք հասկանում ենք, որ նույնը պետք է լինի Երևանի ՋԷԿ-ի ծավալում:</p> <p>Խնդրում ենք հաստատել:</p> | <p>Ոչ, դուք ճիշտ չեք ընկալել: Վերակոդմնորոշումը պետք է լինի Կապալառուի ծավալում:</p> |
| 29. | <p>Ընդհանուր, Հաղորդալարի չափսը և կոնֆիգուրացիան 220 կՎ և 110 կՎ լարման ենթակայանների համար</p> <p>Խնդրում ենք հաստատել հաղորդալարի տեսակը/չափսը և կոնֆիգուրացիան (միաջիդ/երկջիդ) 220 կՎ և 110 կՎ լարման հաղորդաձողի և գծային/տրանսֆորմատորի բջիջների համար: Միագիծ սխեմայում հաղորդաձողի ընթացիկ դրվածքները նույնպես նշված չեն:</p> | <p>Խնդրում ենք պարզաբանել Ձեր հարցը: Արդյոք «current» բառը նշանակում է «առկա», թե «հոսանք» (ամպեր): Ամեն դեպքում, ըստ մեր ստանդարտների, այսպիսի պարամետրերը չպետք է նշվեն միագիծ սխեմայում:</p> |

| No. | Հարցումներ հայտատուների կողմից | Պարզաբանում Գործատուի կողմից |
|-----|---|--|
| | Խնդրում ենք տրամադրել վերոնշյալ մանրամասները: | |
| 30. | <p>Բաժին I. Ցուցումներ Հայտատուներին, կետ 17.5 (a) և Գնային աղյուսակներ: Նշված Incoterm CIP-ը չի ներառում Կապալառուի կողմից մաքսագերծում:</p> <p>Խնդրում ենք պարզաբանել ձեր լրացուցիչ պահանջը՝ համաձայն ՀՊ 21.3 (Փոխադրում) և ՀՊ 21.4 (Մաքսագերծում) կետերի:</p> | <p>ՀՊ 21.4 կետը կարգավորում է Կողմերի պարտականությունները ներմուծվող ապրանքների մաքսագերծման ժամանակ: Ամեն դեպքում մաքսագերծումը կիրականացվի Գործատուի կողմից:</p> |
| 31. | <p>Նախամրցութային հանդիպման արձանագրություն. Կետ 4, Հնարավոր է արդյոք ծանոթանալ ՀՀ համակարգի օպերատորի կողմից կատարված ռելեական պաշտպանության (դրվածքների) հաշվարկների հետ</p> <p>Խնդրում ենք տրամադրել «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր»-ի գլխավոր տնօրենի հետ հանդիպման արձանագրությունը, առ 29.10.2015 թ., ժամը՝ 10:00:</p> | <p>Խնդրում ենք դիմել ԷԷՀՕ ՓԲԸ-ին:</p> |
| 32. | <p>Բաժին IX. Պայմանագրի ձևեր, Պայմանագրի համաձայնագիր, Հոդված 2.2, Վճարման պայմաններ. «Գործատուն կարող է [...] թողարկել [...] վարկագիր [...]»:</p> <p>Խնդրում ենք պարզաբանել, թե արդյոք այս վարկագիրը հասանելի կլինի Կապալառուի համար:</p> | <p>Ըստ Բաժին IX. Պայմանագրի ձևեր, Լրացում 1: Վճարման պայմաններ և ընթացակարգ, ՎՃԱՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ-ի՝ «Սույն պայմանագրի շրջանակներում արտասահմանից մատակարարված կառույցի, սարքավորումների և պարտադիր պահեստամասերի համար վճարումները պետք է կատարվեն հաստատված անփոփոխ փաստաթղթավորված վարկագրի միջոցով, որը պետք է բացվի Գործատուի կողմից հոգուտ Կապալառուի՝ ըստ Համաշխարհային Բանկի հատուկ պարտավորության ընթացակարգի»:</p> |
| 33. | <p>Բաժին IX. Պայմանագրի ձևեր, Լրացում 1. Վճարման պայմաններ և ընթացակարգեր, Վճարման ընթացակարգեր – Վարկագիր. «17 ամսվա արդյունավետության ժամանակահատված»</p> <p>Եթե Աղյուսակ No. 1-ի համար բոլոր վճարումները, բացառությամբ կանխավճարի, պետք է կատարվեն վարկագրից (ներառյալ 35%՝ ըստ ավարտման և 5%՝ ըստ շահագործման ընդունման հավաստագրի), ապա արդյունավետության ժամանակահատվածը կարող է լինել շատ կարճ: Խնդրում ենք պարզաբանել:</p> | <p>Հաշվի առնելով, որ սարքավորումների ավարտման ժամանակահատվածը կազմում է 17 ամիս, ներառյալ գործարկումը և շահագործման ընդունումը, ապա արդյունավետության ժամանակահատվածը բավարար է:</p> |
| 34. | <p>Բաժին IX. Պայմանագրի ձևերը, Հավելված 1. Վճարման պայմանները և ընթացակարգերը, Վճարման ընթացակարգեր – Վարկագիր. «Վճարման համար անհրաժեշտ փաստաթղթեր»:</p> <p>Խնդրում ենք պարզաբանել, թե արդյոք պահանջվում է հայերեն թարգմանություն նշված բոլոր բեռնափոխադրումների փաստաթղթերի (օրինակ՝ բեռնագիր, փաթեթավորման ցանկ և այլն)</p> | <p>Վարկագրով վճարումների համար բեռնափոխադրումների փաստաթղթերի հայերեն թարգմանություն չի պահանջվում:</p> |

| No. | Հարցումներ հայտատուների կողմից | Պարզաբանում Գործատուի կողմից |
|-----|--|--|
| | համար, որոնք պետք է ներկայացվեն վարկագրով վճարման համար: | |
| 35. | <p>Բաժին IX. Պայմանագրի ձևերը, Հավելված 1. Վճարման պայմանները և ընթացակարգերը, Վճարման ընթացակարգեր – Կանխավճարի երաշխիք:</p> <p>Խնդրում ենք պարզաբանել, թե արդյոք Կապալառուն պարտավոր է ներկայացնել Գործատուի երկրում բանկի կողմից թողարկված կանխավճարի երաշխիք:</p> | Ոչ, դա պարտադիր չէ: |
| 36. | <p>1.2.4.14. Տեսահսկում</p> <p>Խնդրում ենք պարզաբանել, թե արդյոք տեսահսկումը պետք է լինի անալոգային կամ IP համակարգի միջոցով:</p> | IP համակարգը նախընտրելի է: |
| 37. | <p>1.2.4.15. Բարձրախոսային համակարգ</p> <p>Խնդրում ենք պարզաբանել բարձրախոսային համակարգի ֆունկցիոնալությունը: Այն պետք է լինի միայն տազնապի ազդանշանային համակարգ, թե՞ պետք է ունենա լրացուցիչ դեր (ռադիո, երաժշտություն և այլն)</p> | Բարձրախոսային համակարգը չպետք է օգտագործվի տազնապի ազդանշանման համար: Օպերատորը պետք է հնարավորություն ունենա օգտագործել բարձրախոսային համակարգը կենտրոնական կառավարման սենյակից հրահանգներ և հրամաններ տալու համար: Օրինակ, պրն ..., խնդրում ենք զանգահարել գլխավոր տնօրեն ...-ին և այլն: Ինչ վերաբերում է երաժշտությանը, ապա խնդրում ենք ներկայացնել ձեր առաջարկությունները: |
| 38. | <p>1.3.14.11 Գնային աղյուսակ No. 1 Բարձրացնող տրանսֆորմատորի սարքավորման փորձարկում</p> <p>Խնդրում ենք ներկայացնել լրացուցիչ բացատրություններ գնային աղյուսակ No. 1-ի 1.3.14.11 կետին («Տեստավորման բարձրացնող տրանսֆորմատորային սարքավորում») առնչվող ձեր պահանջի վերաբերյալ:</p> | Ձեր հարցը պարզ չէ: Ամեն դեպքում տեստավորման և չափման սարքավորում ասելով մենք ի նկատի ունենք սարքավորումների պարբերական տեստավորման և չափման սարքավորումներ՝ համաձայն սարքավորման արտադրողների ստանդարտների: |
| 39. | <p>1.1.3.7. Գնային աղյուսակ No. 1, 110 կՎ լարման հոսանքի տրանսֆորմատորների (ՀՏ) քանակը</p> <p>Միագիծ սխեմայի (ՄՍ) և Գնային աղյուսակ no.1-ի և 2-ի տեղեկատվությունը համապատասխանեցնելու համար խնդրում ենք ընդունել Գնային աղյուսակ No.1-ի և 2-ի 1.1.3.7 կետի նկարագրության վերանայումը հետևյալ կերպ՝ «110 կՎ լարման հոսանքի տրանսֆորմատորի (եռաֆազ) մատակարարումը, ներառյալ անհրաժեշտ մետաղական կառուցվածքը, մալուխները և հողանցումը»: -18 հատ:</p> | Գնային աղյուսակներում և ՄՍ-ում նշված թվերը ճիշտ են: Մեր խորհրդատուն նկատի է ունեցել 18 ՀՏ-ներ միաֆազ միագիծ սխեմայի համար (Եթե դուք նախագծում եք 4 ֆազ, ապա այն կլինի 4 x 18): |
| 40. | <p>1.1.3.2 . Գնային աղյուսակ No. 1 և 2, 110 կՎ լարման բաժանիչներ</p> <p>Միագիծ սխեմայի (ՄՍ) և Գնային աղյուսակ no.1-ի և 2 –ի տեղեկատվությունը համապատասխանեցնելու համար խնդրում ենք ընդունել բաժանիչների քանակների վերանայումը հետևյալ կերպ՝</p> | Խնդրում ենք նախագծել՝ համաձայն գործող նորմերի և ստանդարտների: |

| No. | Հարցումներ հայտատուների կողմից | Պարզաբանում Գործատուի կողմից |
|-----|---|---|
| | <p>«110 կՎ լարման էլեկտրաշարժաբերով, մեկ հողանցման դանակով բաժանիչների (եռաֆազ) մատակարարում, ներառյալ անհրաժեշտ մետաղական կառուցվածքը, մալուխները և հողանցումը» - 21 հատ:</p> <p>«110 կՎ լարման էլեկտրաշարժաբերով, երկու հողանցման դանակով բաժանիչների (եռաֆազ) մատակարարում, ներառյալ անհրաժեշտ մետաղական կառուցվածքը, մալուխները և հողանցումը» - 20 հատ:</p> <p>110 կՎ լարման հողանցման դանակով բաժանիչների ընդհանուր քանակը կմնա 41, ինչպես նշվել էր սկզբում, այնուհանդերձ, գինը կարող է փոքր-ինչ տարբեր լինել:</p> | |
| 41. | <p>1.1.1.3 և 1.1.1.4. Գնային աղյուսակ No. 1 և 2, 220 կՎ լարման բաժանիչներ</p> <p>Համաձայն ՄՄ-ի և Գնային աղյուսակի՝ օգտագործվում են միայն հողանցման դանակով բաժանիչներ 220 կՎ լարման համար: Մրցութային փաստաթղթերում առկա են նաև տեխնիկական աղյուսակներ միաբևեռ և եռաբևեռ բաժանիչների համար առանց հողանցման դանակի: Եթե անհրաժեշտ են այդպիսի բաժանիչներ, ապա խնդրում ենք համապատասխանաբար փոխել նաև գնային աղյուսակը քանակների հետ միասին:</p> | Դա կսահմանափակի մրցակցության սահմանները: Խնդրում ենք նախագծել՝ համաձայն գործող նորմերի և ստանդարտների: |
| 42. | <p>1.2.4.6.1, 1.2.4.6.3, էջեր 149-150, առկա RTU</p> <p>Մենք երկու հարց ունենք առկա RTU-ի վերաբերյալ՝</p> <ol style="list-style-type: none"> 1. Խնդրում ենք հաստատել, որ առկա RTU պահարանը պետք է տեղափոխվի միայն կառավարման նոր շենք և RTU-ի ընդլայնում (լրացուցիչ ազդանշանների ավելացում) անհրաժեշտ չէ: 2. Խնդրում ենք հաստատել, թե արդյոք առկա RTU-ն պետք է ինտերֆեյսով միացված լինի նոր RTU-ին (HMI): | <ol style="list-style-type: none"> 1. Դուք ճիշտ եք հասկացել: 2. Խնդրում ենք պարզաբանել հարցը: |
| 43. | <p>1.2.4.6.1, 1.2.4.6.3, էջեր 149-150, նոր RTU</p> <p>Նոր RTU-ի վերաբերյալ մենք ունենք հետևյալ հարցերը՝</p> <ol style="list-style-type: none"> 1. Խնդրում ենք պարզաբանել, թե արդյոք նոր RTU-ն կարող է օգտագործվել՝ <ol style="list-style-type: none"> a) Պաշտպանիչ/պրոցեսային սարքերից (Station Unit) տվյալների ձեռքբերման նպատակով b) Ինտերֆեյսով ազգային SCADA-ին/տեղական HMI-ին (Gateway) միացման նպատակով | <ol style="list-style-type: none"> 1. Ձեր հարցերին արդեն պատասխանել ենք: 2. Առկա RTU-ի հզորության փոփոխություն նախատեսված չէ: |

| No. | Հարցումներ հայտատուների կողմից | Պարզաբանում Գործատուի կողմից |
|-----|--|---|
| | 2. Խնդրում ենք հաստատել, որ մեկ RTU-ն (մեկ սարք պահուստային էլեկտրամատակարարմամբ) չորս IEC60870-5-104 միացումներով բավարար է և RTU / gateway-ի դեպքում սարքի պահեստավորում անհրաժեշտ չէ: | |
| 44. | <p>1.2.4.6.2. էջ 149, առկա ազգային SCADA</p> <p>Նոր թվայնացված կառավարման համակարգի միացումը առկա ազգային SCADA համակարգին մատակարարման ծավալների մասն է կազմում: Խնդրում ենք պարզաբանել, թե նշվածներից որն է կիրառվելու՝</p> <p>1. Նոր ԹԿՀ-ն (թվայնացված կառավարման համակարգ) պետք է IEC60870-5-104 պրոտոկոլի միջոցով միացվի ազգային SCADA-ին:</p> <p>2. Պահանջվում է առկա ազգային SCADA ծրագրակազմի (ազդանշանների ընդլայնում, նոր պատկերներ) մոդիֆիկացիա:</p> <p>3. Պահանջվում է առկա ազգային SCADA սարքակազմի մոդիֆիկացիա:</p> | <p>1. Այո</p> <p>2. Կապալառուն պետք է մատակարարի այնպիսի համակարգ, որով չի պահանջվում SCADA ծրագրակազմի մոդիֆիկացիա:</p> <p>3. Կապալառուն պետք է մատակարարի այնպիսի համակարգ, որով չի պահանջվում SCADA սարքակազմի մոդիֆիկացիա:</p> |
| 45. | <p>Գազատուրբինի և շոգետուրբինի սնուցիչների պաշտպանություն</p> <p>Մենք երեք հարց ունենք, որոնք վերաբերում են ԳՏԳ և ՇՏԳ 110 կՎ լարման բջիջների պաշտպանությանը՝</p> <p>1. Մեր կարծիքով էլեկտրակայանում առկա է գեներատորի և գեներատոր – տրանսֆորմատորի պաշտպանություն և դա մատակարարման ծավալների մեջ չի մտնում և կարիք չկա այն ինտեգրացնել նոր ԹԿՀ-ի հետ: Խնդրում ենք հաստատել:</p> <p>2. Խնդրում ենք հաստատել, թե արդյոք նոր պաշտպանիչ ռելեներ պետք է մատակարարվեն երկու նոր 110 կՎ լարման ԳՏԳ և ՇՏԳ սնուցիչների համար: Եթե այո, ապա խնդրում ենք սահմանել, թե ինչպիսի պաշտպանիչ սարքավորումներ և պաշտպանական գործառնություններ պետք է առաջարկվեն՝ 21, 50/51 և այլն:</p> <p>3. Այն դեպքում, եթե ենթակայանում 110 կՎ լարման ԳՏԳ և ՇՏԳ սնուցիչների համար առկա են պաշտպանիչ սարքավորումներ, ապա խնդրում ենք պարզաբանել, թե ինչ պաշտպանիչ սարք է առկա (արտադրողը, սարքի համարը) և արդյոք այդ սարքը պետք է ինտեգրացվի նոր ԹԿՀ-ի հետ՝ օգտագործելով IEC61850 պրոտոկոլը:</p> | <p>1. Գեներատորի և գեներատոր – տրանսֆորմատորի պաշտպանություններն առկա են, և Կապալառուն դրանց մուտքի իրավունք չունի: Ինչ վերաբերում է ինտեգրացմանը, ապա ձեր հարցը հստակ չէ: Ամեն դեպքում, Կապալառուի կողմից մատակարարվելիք պաշտպանության համակարգը պետք է ինտեգրացվի ԳՏԳ և ՇՏԳ առկա պաշտպանության համակարգերի հետ:</p> <p>2. ԳՏԳ և ՇՏԳ պաշտպանության բոլոր ռելեները ներկայում առկա են և գործում են: Կապալառուի կողմից մատակարարվելիք ենթակայանի նոր պաշտպանության համակարգը պետք է համատեղելի լինի ԳՏԳ ու ՇՏԳ առկա պաշտպանության համակարգերի հետ: Կապալառուն պետք է իրականացնի նոր ենթակայանի պաշտպանության համակարգն այնպես, որ խուսափի որևէ փոփոխությունից ԳՏԳ ու ՇՏԳ առկա պաշտպանության համակարգերում:</p> <p>3. Ձեր հարցը հստակ չէ: Միայն ընկալումից խուսափելու համար խնդրում ենք ուղարկել ձեր մասնագետին տեղամաս ուսումնասիրություն իրականացնելու նպատակով:</p> |
| 46. | <p>PLC սարքավորում</p> <p>PLC սարքավորման վերաբերյալ երեք հարց ունենք՝</p> <p>1. Համաձայն Պարզաբանում No. 3-ի պատասխանի՝ 110 կՎ լարման գծերի համար PLC անհրաժեշտ չէ: Խնդրում ենք հաստատել, որ</p> | <p>1. Այո, ԷԷՀՕ-ի նամակը սույն հարցի վերաբերյալ լրիվ բավարար է:</p> <p>2. Տե՛ս մրցութային փաստաթղթերի 365-րդ էջը:</p> <p>3. Ձեր հարցը պարզ չէ: Ամեն դեպքում մեկ անգամ ևս պարզաբանում ենք. «Տե՛ս պատասխան No. 8-ը»:</p> |

| No. | Հարցումներ հայտատուների կողմից | Պարզաբանում Գործատուի կողմից |
|-----|--|--|
| | <p>հեռապաշտպանության նպատակների համար առկա է 4 մանրաթել յուրաքանչյուր ՕԳ-ի առկա ՕՄՀԼ-ի վրա:</p> <p>2. Խնդրում ենք պարզաբանել, թե արդյոք 110 կՎ լարման գծերին առնչվող սկզբունքը թույլատրելի է 220 կՎ լարման գծերի դեպքում: Ի գիտություն Ձեզ՝ մեր դիֆերենցիալ/դիստանցիոն պաշտպանության ռելենները կարող են սարքավորված լինել օպտիկա-մանրաթելային կապի մոդուլով մինչև 100 կմ հեռավորության տարածք ծածկելու համար, այնպես որ լրացուցիչ PLC սարքավորման անհրաժեշտություն չկա:</p> <p>3. Խնդրում ենք տեղեկացնել, թե ով է պատասխանատու 220 կՎ լարման գծերի ՕՄՀԼ-ի համար:</p> | |
| 47. | <p>1.2.4.5.3. 148 էջ, Հետվթարային մոնիտորինգի գրանցող սարք</p> <p>Համաձայն Պարզաբանում No.2-ի՝ հետվթարային մոնիտորինգի գրանցող սարքը պետք է ունենա ոչ ավելի, քան 5 միլիվայրկյան զգայունություն, և հիշողության պահպանումը պետք է լինի 5 օրից ոչ պակաս: Խնդրում ենք պարզաբանել, որ եթե պաշտպանության ռելենները իրականացնում են այդ պահանջը, ապա արդյոք դեռևս անհրաժեշտ է պաշտպանության ռելեններից անկախ հետվթարային մոնիտորինգի երկրորդ գրանցող սարքի մատակարարում:</p> | Տե՛ս Պարզաբանում No. 2-ի պատասխան No. 7-ը: |
| 48. | <p>ԹԿՀ</p> <p>Խնդրում ենք պարզաբանել, թե արդյոք անջատիչը (ԹԿՀ-ից օպերատորի հրաման անջատիչին) պետք է ունենա սինխրոստուգման հնարավորություն ձեռքով միացման դեպքում:</p> <p>Խնդրում ենք պարզաբանել սա 220 կՎ, 110 կՎ և 35 կՎ լարման համար:</p> | Այո, տե՛ս մրցութային փաստաթղթերի 566-րդ էջը: |